Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 3

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2018 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Արտադրական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
2. Հեռակա ուսուցման ասպիրանտների ատեստավորում:
3. Հայ գրականության պատմության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. Առաջին կիսամյակի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներում ուսանողների հաճախումների վիճակը ֆակուլտետում:
5. Ընթացիկ հարցեր:

Ողջունելով գիտխորհրդի անդամներին՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 28-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով դեկանը, իր տեղակալ դոց. Ա. Սարգսյանը և արտադրական պրակտիկա ունեցող համապատասխան ամբիոնների վարիչներն ասացին, որ այս տարի

այդպիսի պրակտիկայի կազմակերպումը նորություն էր, և դրականի կողքին բնականաբար անխուսափելի էին նաև թերացումները: Ուսանողները հիմնականում բավարարված են շատ հիմնարկների մատուցած ծառայություններից (խմբագրություններ, Մատենադարան, զանազան տուն-թանգարաններ...), սակայն դժգոհություններ են հայտնվել որոշ հաստատություններից և, որ ամենազարմանալին է, հատկապես ԵՊՀ-ի հրատարակչությունից՝ հատկապես անբարյացակամ վերաբերմունքի համար, կամ էլ որոշ հիմնարկներում՝ վարձավճարների առիթով:

Ելույթ ունեցողները հույս հայտնեցին, որ հաջորդ տարիներին աստիճանաբար կշտկվեն նկատված թերությունները, և արտադրական պրակտիկան կտա իր արգասիքները:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր հեռակա ուսուցման ասպիրանտների ատեստավորմանը: Գիտխորհրդի անդամները մեկ առ մեկ լսեցին հեռակա ուսուցման հայցորդներին ու ասպիրանտներին, զանազան հարցումներ ուղղեցին նրանց կատարած աշխատանքների մասին, և անցկացվեց ատեստացիա:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) **Հռիփսիմե Սուրենի Սարգսյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Հռիփսիմե Սարգսյանը 2017 թ. ընդունվել է ասպիրանտուրա (հեռակա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Գովազդային խոսույթը արդի հայերենում», ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆ. Յուրի Ավետիսյան:

Հռիփսիմե Սարգսյանը 2017 - 2018 ուստարում մասնակցել է գիտության փիլիսոփայություն, մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն), տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ, մանկավարժություն և հոգեբանություն պարտադիր, գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում ընտրովի դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ծանոթացել է տեսական գրականությանը (հիմնականում օտարալեզու) :

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Հռիփսիմե Սարգսյանին** ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Տաթևիկ Հայկի Մերջանյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և Վ. Սաֆարյանը:

Նշվեց, որ Տ. Մերջանյանը հայցորդ է ձևակերպվել 2017թ., թեկնածուական ատենախոսությանս թեման է «Կյանքի և մահվան խնդիրը Նար-Դոսի երկերում»՝ բ. գ. դ., պրոֆ. Ալ. Ա. Մակարյանի գիտական ղեկավարությամբ (հրաման՝ 78 § 7, 02. 05.2017թ.):

2017-2018 ուստարում թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման և դասակարգման աշխատանքներին զուգընթաց՝ ԲՈԿ-ի անվանացանկով տպագրել է գիտական 6 հոդված.

1. «Կյանքի ու մահվան ընկալումները Նար-Դոսի «Ինչպես բժշկեցին» և «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպերում», Հայագիտական հանդես 3 (37), Երևան, 2017, էջ 70-79
2. «Բարոյական անկման նարդոսյան ընկալումները («Հոպոպ», «Թե ի՞նչ եղավ հետո...», «Ադամամութին»)», Հայագիտական հանդես 4 (38), Երևան, 2017, էջ 99- 113
3. «Բարոյահոգեբանական անկման ընդհանրությունները Նար-Դոսի «Հոգուն վրա հասավ» և «Սև փողերի տոկոսը» նորավեպերում», Հայագիտական հանդես 1 (39), Երևան, 2018, էջ 67-75:
4. «Անձնասպանության փիլիսոփայական ինքնագիտակցումը Նար-Դոսի «Աննա Սարոյան» նամակագրական վիպակում», ՎԷմ, համահայկական հանդես, 2018թ. ապրիլ-հունիս, թիվ 2 (62), էջ 92-104
5. «Սիրո փիլիսոփայական և հոգեբանական դրսևորումները Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակում», Հայագիտության հարցեր, հանդես, 2 (14), էջ 146-162
6. «Անհատի գաղափարական և հոգեբանական զարգացումները Նար-Դոսի «Պայքար» վեպում», (տպագրման փուլում է, «Բանբեր Երևանի համալսարանի»):

Հաջողությամբ հանձնել է մասնագիտական որակավորման բոլոր քննությունները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել **Տաթևիկ Հայկի Մերջանյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Հայկ Արարատի Հովհաննիսյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը և Ս. Մուրադյանը:

Նշվեց, որ Հայկ Արարատի Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Զապել Եսայանի պատումի արվեստը», գիտական ղեկավարը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Արշավիրի Մակարյանը: Ձինվորական ծառայությանը զուգահեռ՝ ասպիրանտը 2017-2018 ուստարում իրականացրել է թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման և դասակարգման աշխատանքներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել **Հայկ Արարատի Հովհաննիսյանին:**

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Աննա Վարդանի Ստեփանյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Սաֆարյանը և Ս. Մուրադյանը:

Նշվեց, որ գիտական ատենախոսության թեման է «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ միջնադարյան քնարերգության մեջ»: Գիտական ղեկավար է պրոֆ. Վ. Հ. Սաֆարյանը:

Ասպիրանտը զբաղվել է թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով: Ուսումնասիրել է հայ միջնադարյան քնարերգությունը, կարդացել է բնագրեր, ձեռագրեր:

2017թ. մայիս-հունիս ամիսներին հանձնել է որակավորման քննություններ «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մասնագիտական օտար լեզու» /գերմաներեն/, «Գիտության փիլիսոփայություն», «Մանկավարժություն» առարկաներից:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել **Աննա Վարդանի Ստեփանյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ Թամարա Բորիկի Անդրեասյանի ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Սաֆարյանը և Ս. Մուրադյանը:

Նշվեց, որ գիտական ատենախոսության թեման է «Լևոն Բաշալյանը արևմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում»: Գիտական ղեկավարն է պրոֆ. Վ. Հ. Սաֆարյանը:

2015-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 16-ը ընկած ժամանակահատվածում հայցորդը զբաղվել է թեմայի հետ առնչվող նյութերի հավքագրման աշխատանքներով: Ուսումնասիրել է ժամանակի պարբերական մամուլը՝ «Հայրենիք», «Արևելք» օրաթերթերը և «Մասիս» շաբաթաթերթը, որտեղ ուսումնասիրության նյութ է դարձրել ոչ թե 1880-ականների իրապաշտ սերնդի գեղարվեստական գործերը, որոնք վերոնշյալ մամուլում լույս էին տեսնում հատվածաբար, այլ հրապարակախոսական, գրաքննադատական, ակնարկային բնույթի աշխատանքները:

2016թ. մայիս-հունիս ամիսներին հանձնել է որոկավորման քննություններ «Ինֆորմատիկա», «Անգլերեն» առարկաներից: Գրեթե ավարտված վիճակում են ատենախոսության երկու գլուխները:

Թեմայից տպագրվել է չորս հոդված ևս մեկը տպագրական ընթացքում է:

1. <<Կնոջ կերպավորման արվեստը Լ. Բաշալյան արձակում>>, <<Կանթեղ>>, 2014:
2. <<Միֆոլագիական և այլաբանական տարրերը Լ. Բաշալյանի ուշ շրջանի գործերում>>, <<Մխիթար Գոշ>> գիտական հոդվածների ժողովածու, 2016:
3. <<Սոցիալական խնդիրներով պայմանավորված՝ մարդկային ճակատագրերի խեղաթյուրման հարցերը Լ. Բաշալյանի գործերում>>, Բանբեր՝ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան, 2017:
4. <<Պանդխտության թեման Լ. Բաշալյանի գործերում>>, <<Մեսրոպ Մաշտոց համալսարան>>, <<Կովկասը՝ մեր ընդհանուր տուն>> խորագրով միջազգային գիտաժողովի նյութեր:
5. «Լևոն Բաշալյանը և Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթը (1891-1895)», հանձնված է տպագրության Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել **Թամարա Բորիկի Անդրեասյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ **Թագուհի Արարատի Ղազարյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ **Թագուհի Ղազարյանի** թեկնածուական ատենախոսության թեման է «Եղիշե Չարենցի «Երկիր Նայիրի» վեպի ստեղծագործական պատմությունը և պատմաֆունկցիոնալ գործառնությունը»:

Նա 2017 թ. նոյեմբերին մասնակցել է Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովին՝ հանդես գալով «Եղիշե Չարենցի «Երկիր Նայիրի» վեպի 1933թ. ռուսերեն թարգմանության հրատարակությունը և Մարտիրոս Սարյանի նկարազարդումները» թեմայով զեկուցմամբ: Հոդվածն ամփոփվել է նույն գիտաժողովին նվիրված ժողովածուում:

2017 թ. դեկտեմբերին մասնակցել է «Բուն ԹիՎի»-ի գիտահետազոտական դրամաշնորհին, ներկայացրել է «Չարենցի՝ 1922-24 թթ. գործունեությանը ժամանակի արձագանքը և դրա հետագա մեկնաբանությունները» թեման և դարձել 10 հաղթողներից մեկը: Թեմայի բանախոսությունը և հոդվածի գրավոր տարբերակը հրապարակված են boon.am կայքում:

Ուսումնասիրել է Եղիշե Չարենցի 1920-ական թթ. նամակագրությունը, որի միայն մի փոքր հատվածի վրա հիմնված հոդված է հրապարակել granish.org կայքում: Առաջիկայում մտադիր է շարունակել նամակագրությունների ուսումնասիրությունների վրա հիմնված հոդվածների շարքը:

2017 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թ. մարտի 13-ը աշխատելով Եղիշե Չարենցի տուն-թանգարանում՝ հեղինակել, նախաձեռնել կամ կազմակերպել է կարևորագույն մի շարք միջոցառումներ, ցուցադրություններ, գիտաժողովներ, իրականացրել մատենագիտական աշխատանքներ:

2018 թվականի մարտին ավարտին է հասցրել Եղիշե Չարենցի «Ռուբայաթների» համեմատական բնագրերի կազմումը: Գիրքը շուտով լույս է տեսնելու ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Տարվա ընթացքում աշխատել և վերջնական տեսքի է բերել Եղիշե Չարենցի «Երկիր Նայիրի» վեպի 1922-24 թթ. («Նորք» հանդես), 1926 թ. (Պետհրատ), 1932 թ. (Պետհրատ), 1934թ. (Երկեր, Պետհրատ), 1954թ. (Երկեր, Հայպետհրատ, խմբ.՝ Ս. Տարոնցի), 1967թ. (ԳԱԱ, Երկերի ժողովածու, 5 հ., խմբ.՝ Ալմաստ Զաքարյան) համեմատական բնագիրը՝ նշելով բոլոր այն փոփոխությունները, որոնք կատարվել են հրատարակությունից հրատարակություն:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Թագուհի Ղազարյանին ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ **Լիլիթ Վաղարշակի Գասպարյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Լիլիթ Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Զորայր Խալափյանի վիպագրության պատումի առանձնահատկությունները», գիտական ղեկավարն է բան. գիտ. դոկտ., պրոֆ Վ. Գաբրիելյանը:

Ասպիրանտական առաջին տարում նա մասնակցել է պարտադիր և կամընտրական մի շարք դասընթացների՝ հանձնելով ստուգարքները, ուսումնասիրել է թեմային առնչվող նյութեր և արխիվներ: Աշխատում է թեմային առնչվող հոդվածի վրա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Լիլիթ Գասպարյանին ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ **Մանե Սաղաթելի Հովհաննիսյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Մանե Սաղաթելյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Համաստեղի պատմվածքների ժանրային տիպաբանությունը», գիտական ղեկավարն է բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանը:

Նա դեռևս չի մասնակցել պարտադիր և կամընտրական դասընթացներին և չի հանձնել ստուգարքներ՝ ընտանեկան կարգավիճակից ելնելով (ունի նորածին երեխա):

Ուսումնասիրել է թեմային առնչվող նյութեր և արխիվներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Մանե Սաղաթելյանին ատեստավորել:

Օրակարգի **3-րդ հարցի** առիթով տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ս. Մուրադյանը: Նա մասնավորապես ասաց հետևյալը.

- Հարգելի՛ գործընկերներ, սույն հաշվետվությամբ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում անցած մեկ տարում ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնում կատարված աշխատանքները, ինչպես նաև բոլորիս մտահոգող մի քանի խնդիրներ:

Ամբիոնը 11 հաստիք ունի, որոնցից միայն երեքն են ամբողջական, առկա 2 ասպիրանտ, արտասահմանյան 1 ու հեռակա 1ասպիրանտ և 4 հայցորդ:

Մեր ամբիոնն էլ մյուսների նման անբարենպաստ պայմանների հետևանքով ենթարկվել է աղետի և դեռ գտնվում է անցողիկ նեղությունների փուլում: Բայց հուսադրում են, թե այժմյան դժվարություններն իբր կախված են ուսանողների թվի ու դրա հետևանքով՝ նաև դասաժամերի կրճատումից:

Ընդունում ենք, որ այս պատճառներն օբյեկտիվ են, սակայն դրանց միացել են նաև համալսարամական որոշ օղակների ղեկավարների կամայականությունները, որոնց հետևանքը ռոմանագերմանական բանասիրության, արևելագիտության և պատմության ֆակուլտետների ուսումնական ծրագրերից գրեթե դուրս է մղվել «Հայ գրականություն» առարկան այն դեպքում, երբ հայագիտությունը ՀՀ-ում պետականորեն հռչակված է որպես գերակա գիտաճյուղ: «Հառա՛ջ կըպոռանք ու ետ-ետ կը քալենք» պարոնյանական հեգնանքն այսօր այլևս չունի «Ես ասանկ կըսեմ՝ դուն անանկ հասկցիր» նշանակությունը, որովհետև զարգացումն այսօր ուրիշ իմաստ ու բովանդակություն ունի:

Կանգնած ենք հետևյալ իրողության առաջ. առաջներում բանասիրական ֆակուլտետի մի բաժինը եղած և հայ գիտությանն ու մշակույթին ծառայելու նպատակով ստեղծված ռոմանագերմանական ֆակուլտետետն այնքան է զարգացել, որ նրա ղեկավարները կարծում

են՝ հայ գրականություն, հայոց լեզու և նման հետամնաց բաներ իրենց ուսանողներին այլևս պետք չեն, արևելագիտության ֆակուլտետը «զարգացել» է այնքան, որ իրանագիտության բաժնում հայ գրականությունը փոխարինվել է Բելուջիստանի բոշաների բարբառների յուրահատկությունների ուսումնասիրությամբ, իսկ պատմության ֆակուլտետի գործընկերները ջանում են հավատացնել, թե հայ գրականության ժամերը կրճատվել են իբր թյուրիմացաբար:

Դասաժամերի կրճատման պատճառներից մեկն էլ այն է, որ մագիստրատուրայում թե՛ առկա և թե՛ հեռակա ուսուցմամբ առանձին ամբողջական խմբեր վերջին տարիներին չեն ձևավորվում: Այս ամենի հետևանքով կրճատվել են հայ գրականության ամբիոնների դասաժամերը, և մեր ամբիոնում ստիպված ենք եղել ներքին համաձայնությամբ ոմանց փոխադրել 0,75, ոմանց էլ՝ 0, 5 դրույքի:

Սա դեռ չարյաց փոքրագույնն էր: Որպեսզի ուսումնական գործընթացը չտապալվի, սփյուռքի նախկին փոխնախարար, մեր ամբիոնի լավագույն դասախոսներից մեկին՝ 0, 5 դրույքով դոցենտ Ս. Սրապիոնյանին, պաշտոնանկությունից հետո գոնե 0, 75 դրույքով իր պաշտոնում վերականգնելու և ամբողջ մեկ տարի 0,5 դրույքով աշխատած բ. գ. դ., դոցենտ Ս. Մխիթարյանին նոր ուսումնական տարում գոնե 0, 75 դրույք դարձնելու համար ամբիոնով համաձայնեցինք վճարվել ինչ-որ գործակցի կիրառումով, որն ավելի է նվազեցնում առանց այն էլ ցածր աշխատավարձը:

Այսպիսով՝ ամբիոնն այսօր ունի 3 ամբողջական հաստիք, որ զբաղեցնում են ուսումնական գործընթացի հիմնական ծանրությունը կրող պրոֆեսորներ Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ալ. Մակարյանը, մանավանդ որ նրանք իրականացնում են նաև ջանք ու ժամանակ խլող ծավալուն հասարակական չվճարվող աշխատանքներ: Մեկը ԵՊՀ 100-ամյակի առթիվ լույս տեսնող «Կենսագրական հանրագիտարանով» և «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամով ու նրա «Բարեգործ» պաշտոնաթերթով է զբաղված, ԲՈԿ-ի՝ համալսարանում գործող աստիճանաշնորհող մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է, մեկը ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահն է, մյուսը՝ ինչպես գիտեք՝ միաժամանակ և՛ ֆակուլտետի, և՛ ԲՈԿ-ի աստիճանաշնորհող խորհրդի գիտական քարտուղարն է՝ պաշտոնական փաստաթղթերով գերծանրաբեռնված:

0,75 դրույքով են՝ դոց., դոց. Ս. Մխիթարյանը, Ս. Սրապիոնյյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը, Հ. Համբարձումյանը, Ն. Վարդանյանը, իսկ դոց., դոց. Վ. Ավագյանն ու Ա. Գալստյանը դեռևս մնում են 0, 5 դրույքով:

Սա թեև ոգևորող վիճակ չէ, բայց կարծես բնավ չի ազդել գործընկերների աշխատանքային կարգապահության ու գիտամանկավարժական գործունեության որակի վրա: Համերաշխ այս կոլեկտիվը ըմբռնումով է հաղթահարում ծագած դժվարությունները. դասախոսությունները և սեմինարները կայանում են սահմանված կարգով, պրակտիկան և ավարտական ու կուրսային աշխատանքները, ՈՒԳԸ աշխատանքները՝ ղեկավարվում, ամբիոնի աշխատակիցները մասնակցում են համալսարանի և հանրապետության գիտամշակութային կյանքին, տեղական ու միջազգային գիտաժողովներին և ԵՊՀ մինչհամալսարանական կրթության բաժնի կազմակերպած միջոցառումներին:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, ազգագրության ինստիտուտի, մյուս բուհերի, Արցախի պետական համալսարանի կողմից ամբիոնը հաճախ է ճանաչվում որպես արտաքին գրախոսող կազմակերպություն: Իսկ դա նշանակում է՝ գրախոսել մեզ ուղարկված թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունները, երբեմն էլ դառնալ պաշտոնական ընդդիմախոս: Ամբիոնում առավել հաճախ այդ պարտականությունը բաժին է ընկնում Ս. Մուրադյանին:

Ամբիոնի գիտական արտադրանքը անգամ այս պայմաններում բարեբախտաբար չի նվազել: Դրական գնահատականի ակնկալիքով ձեզ ենք ներկայացնում է առանձին գրքերով տպված մենագրությունները, գիտական պարբերականներում, ժողոածուներում ու տարեգրքերում լույս տեսած հոդվածներով, ինչպես նաև՝ թեզիսներով, տեղական և միջազգային գիտաժողովներում կարդացված զեկուցումներով:

Նախընտրում ենք մեր գործընկերներին ներկայացնել մեկ անգամ՝ խուսափելով գրքի կամ հոդվածի առիթով կրկնությունից:

1. Պրոֆ. Ս. Մուրադյանը գրեթե ավարտին է մոտեցնում «Հայ նոր գրականության պատմության» բուհական դասագրքի 1-ին հատորի աշխատանքները: Ո՛չ պայմանագիր կա, ո՛չ պարտադրանք. հանուն նրա, որ հանրապետության և Արցախի բուհերի ուսանողները հայ նոր գրականության պատմության դասագիրք ունենան, նա ինքնակամ է

ստանձնել այդ ծանր բեռը: Արդեն պատրաստել է A 4 չափի 350 էջ համակարգչային շարվածք, որի էջերը մաս-մաս տրվում են մեր 2-րդ կուրսի ուսանողներին: Հեղինակը հույս ունի դասագրքի 1-ին մասն ավարտել գարնանը և հրատարակել մինչև աշնանը կայանալիք ԵՊՀ հիմնադրման 100-ամյակի հոբելյանական հանդիսությունները:

Նա զուգահեռաբար զբաղվում է նաև Հ. Շիրազի անտիպ ժառանգության ուսումնասիրության ու հրատարակման գործով: Գյումրիում՝ բանաստեղծի հուշատուն-թանգարանում արդեն կայացել են երկու գրքի շնորհանդեսներ. 2017 թ. հոկտեմբերի 1-ին՝ «Հուշարձան հայրիկիս» գրքի, իսկ 2018 թ. սեպտեմբերի 30-ին՝ «Անտիպ էջեր» գրքի Ա հատորի (նախատեսված է 4 հատոր): Երկու գրքերն էլ պահպամված շուրջ 3 000 ձեռագրերից ընտրել, կազմել, ծանոթագրել և ընդարձակ ուսումնասիրություն - առաջաբաններով հրատարակել է Ս. Մուրադյանը: Գրեթե պատրաստ է «Անտիպների» երկրորդ հատորը, որը լույս կտեսնի առաջիկա ամիսներին: Լույս են տեսել նաև 2 հոդված և երեք գիրք՝ նրա առաջաբաններով:

2. Պրոֆ. Վ. Սաֆարյանը, որ հին ու միջնադարյան, նոր ու նորագույն գրականություններից իր նախասիրություններն ունեցող ինքնատիպ գրականագետ է, առանձին գրքով հրատարակել է վերջին տարիների իր գիտական լայն հետաքրքրությունները բնութագրող հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն՝ «Գրականության պատմության դրվագներ» խորագրով:

3. Բավական արդյունավետ է աշխատել նաև պրոֆ. Ալ. Մակարյանը. դրա խոսուն վկայությունն են ոչ միայն «Կրկին Պարոնյանի հետ (Նոր ընթերցումներ)» խորագրով մենագրությունը, այլև ամսագրային 6 ծավալուն հոդվածներն ու 43 էջ կազմող մի ընդարձակ վերջաբան-ուսումնասիրություն Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» գրքում: Այս ամենին հավելվում է նաև հայ-ֆրանսիական գրական կապերին նվիրված մի ուշագրավ զեկուցում, որը նա կարդացել է Ֆրանկոֆոնիայի համաժողովին. այն առանձին ժողովածուում լույս կտեսնի մինչև տարեվերջ:

4. Դոց. Ռ Էլոյանը, որ դժվարությամբ էր գրում առաջներում, հիմա Եր. Օտյանի քաղաքական երգիծանքի մասին «Արցունքոտ ծիծաղի մեծ վարպետը» մենագրության 1-ին հատորը տպագրելուց հետո հրատարակության է պատրաստում երկրորդ գիրքը: Արտասահմանյան պարբերականում հրատարակել է 1 հոդված:

5. Ուրախալի է երիտասարդ դոցենտ Հ. Համբարձումյանի ««Սասնա ծռեր». պատում, մոտիվ, գրքային ավանդույթ» իրոք պատկառելի մենագրության տպագրությունը: Սրան գումարվում են 3 հոդվածներ՝ տպված մեկը ռուսական հանդեսում՝ անգլերենով, մեկը՝ ժողովածուում, մեկը՝ հանդեսում, 4 զեկուցում հանրապետական և միջազգային գիտաժողովներում՝ անգլերենով, 2 հրապարակային բանախոսություն ԱՄՆ-ում:

6. Դոց. Ն. Վարդանյանը անցնող տարում 4 հոդված է հրատարակել հանդեսներում ու ժողովածուներում, 1 գրքի նախաբան, 2 թեզիս, 6 զեկուցում հանրապետական և անգլերենով 2 զեկուցում միջազգային գիտաժողովներում:

7. Բ. գ. դ., դոց. Ս. Մխիթարյանը ամսագրային 5 հոդվածի հեղինակ է:

8. Ամսագրային 5 հոդված հրատարակել է նաև դոց Վ. Ավագյանը, որը հայ միջնադարյան գրականությունից դոկտորական ատենախոսության թեմայի որոնումների մեջ է:

9. Հրապարակումներ չունեն դոց., դոց. Սերժ. Սրապիոնյանը, Վարդան Եղիազարյանը և Արշալույս Գալստյանը:

10. Հայցորդ Ա. Թորոսյանը կատարել է թեկնածուական ատենախոսության զգալի մասը և տպագրել է ամսագրային 2 հոդված:
11. Հայցորդ Տաթևիկ Մերջանյանն ավարտին է մոտեցրել է թեկնածուական ատենախոսությունը, արդեն տպագրել ամսագրային 6 հոդված ու պատրաստել յոթերորդը:
12. Հայցորդ Թ. Անդրեասյան – պատրաստ է թեկնածուական ատենախոսության 2/3-ը, տպագրել է հոդված:

Ամփոփելով ասենք՝ հաշվետու ժամանակում ԵՊՀ Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնում մանկավարժական գործունեությանը զուգահեռ հրատարակվել են հետևյալ աշխատանքները՝

6 գիրք, 39 հոդված, 5 գրքի առաջաբան ու վերջաբան, 2 թեզիս:

Ճիշտ չի լինի մոռացության մատնել ամբիոնի գործունեության մի այնպիսի բնագավառ, ինչպիսին մինչհամալսարանական կրթության բաժնի միջոցառումներ են: Համալսարանին դիմորդ և հեղինակություն բերող այդ գործընթացին բարեխղճորեն մասնակցել են գրեթե բոլորը: Մայրաքաղաքի դպրոցներում, Աբովյանում, Իջևանում, Արտաշատում,

Գյումրիում, Սիսիանում եղել են Ս. Մխիթարյանը, Վ. Ավագյանը, Ն. Վարդանյանը, Հ. Համբարձումյանը Ս. Սրապիոնյանը և ամենից շատ՝ Ս. Մուրադյանը: Նրան հրավիրում են ամեն տեղից, և նա բարեխղճորեն մեկնում է դասախոսելու: Ավելացնենք նաև, որ Ս. Մուրադյանը մասնակից է եղել մի կարևոր համահայկական միջոցառման: 11 անգամ ՀՀ Ազգային ժողովի՝ մայրաքաղաքում ու մարզերում և 7 անգամ էլ պրոֆ. Ա. Ավագյանի հետ միասին ամերիկահայ բարերարների՝ Շուշիում իրականացրած մանկապատանեկան ասմունքի մրցույթ-փառատոնի գնահատող հանձնախմբերն իրականացրել են նրա մասնակցությամբ:

Շնորհակալություն:

Գիտխորհուրդը ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի կատարած տարեկան աշխատանքները բաց քվեարկությամբ համարեց միանգամայն դրական:

Օրակարգի **4-րդ հարցի** առիթով (առաջին կիսամյակի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ուսանողների հաճախումների վիճակը ֆակուլտետում) ֆակուլտետի դեկանը հայտնեց իր խոր մտահոգությունը: Նա մանրամասն ընթերցեց տարբեր կուրսերում մշտապես բացակայող ուսանողների անուն-ազգանունները, և պարզվեց, որ ընդամենը 2 ամսվա ընթացքում նրանց բացակայությունների թիվը տատանվում է 28-144 ժամերի սահմաններում: Գիտխորհրդի անդամների (Ա. Ավագյան, Ժ. Քալանթարյան, Ս. Մուրադյան, Վ. Գաբրիելյան և այլք) կարծիքով՝ դեկանատը և ռեկտորատը զանազան տույժերի միջոցով պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ կանխելու համար այդ արատավոր երևույթը:

Ընթացիկ հարցերում

Լ Ս Ե Ց Ի Ն – Բանասիրական գիտությունների դոկտոր, ամբիոնի պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանի**՝ հայ բանասիրության ֆակուլտետում դասավանդած դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում տեղադրելու երաշխավորության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ռ. Էլոյանը և Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ պրոֆ. Ալ. Մակարյանն արդեն մի քանի տարի է, որ յուրաքանչյուր դասախոսության թեմայի ավարտին համապատասխան նյութի էլեկտրոնային տարբերակը համացանցով ուղարկում է ուսանողներին՝ այդպիսով մի կողմից ժամանակ խնայելով, իսկ մյուս կողմից՝ ուղղորդելով և գործնական աշխատանքների նախապատրաստելով նրանց: Անցած՝ 2017-2018 ուստարում ևս դրանք արդեն հաջողությամբ փորձարկվել են համապատասխան կուրսերում: Այդ դասախոսություններն ունեն գիտատեսական ու մեթոդական պատշաճ մակարդակ և կարող են երաշխավորվել՝ տեղ գտնելու ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Երաշխավորել բանասիրական գիտությունների դոկտոր, ամբիոնի պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանի**՝ հայ բանասիրության ֆակուլտետում դասավանդած դասախոսությունների («**19-րդ դարի հայ գրականության պատմություն - 1**», «**19-րդ դարի հայ գրականության պատմություն - 2**», «**Հայ երգիծաբանություն**») էլեկտրոնային տարբերակները ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում տեղադրելը:

Լ Ս Ե Ց Ի Ն – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոց. **Աշխեն Էդուարդի Զրբաշյանի**՝ հայ բանասիրության, ռոմանագերմանական բանասիրության և արևելագիտության ֆակուլտետում դասավանդած դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները ԵՊՀ-ի «Intranet. ysu. am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում տեղադրելու երաշխավորության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Ց Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ա. Մակարյանը և դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ դոց. Ա. Զրբաշյանը երկար տարիներ դասավանդում է գրականագիտական տարբեր առարկաներ հայ բանասիրության, ռոմանագերմանական բանասիրության և արևելագիտության ֆակուլտետներում, ունի ուսումնամեթոդական տարբեր նյութեր և դասախոսություններ, որոնք նաև էլեկտրոնային տարբերակով մշտապես փոխանցել է ուսանողներին՝ նպաստելով դասընթացի ավելի արդյունավետ յուրացմանը: Այդ նյութերն ու դասախոսություններն ունեն գիտատեսական և մեթոդական պատշաճ մակարդակ և կարող են

տեղ գտնել ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Երաշխավորել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Աշխեն Էդուարդի Ջրբաշյանի** դասավանդած դասախոսությունների (**«Գրականագիտության ներածություն», «Հայկական ոտանավորի տաղաչափության համակարգը»**, **«Պատմողական տեքստի կառուցվածքաբանություն»**) էլեկտրոնային տարբերակները ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում տեղադրելը:

Լ Ս Ե Ց Ի Ն – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, **Ալվարդ Հովհաննեսի Սեմիրջյանի՝** հայ բանասիրության ֆակուլտետի առկա և հեռակա բաժինների մագիստրատուրայում դասավանդած դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում տեղադրելու երաշխավորության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Ց Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ դոց. Ա. Սեմիրջյանը հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայում դասավանդում է **«20-րդ դարի գրական-գեղարվեստական ուղղությունները»** առարկան, ունի ուսումնամեթոդական տարբեր նյութեր և դասախոսություններ, որոնք նաև էլեկտրոնային տարբերակով մշտապես տրամադրել է ուսանողներին՝ նպաստելով դասընթացի ավելի արդյունավետ յուրացմանը: Այդ նյութերն ու դասախոսությունները ունեն գիտատեսական և մեթոդական պատշաճ մակարդակ և կարող են տեղ գտնել ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Երաշխավորել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ալվարդ Հովհաննեսի Սեմիրջյանի** դասավանդած **«20-րդ դարի գրական-գեղարվեստական ուղղությունները»** առարկայի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները ԵՊՀ-ի «Intranet.ysu.am» հաշվետվողականության համակարգի դասախոսությունների բաժնում տեղադրելը:

Լ Ս Ե Ց Ի Ն – Բ. գ. թ., դոցենտ **Զարիկ Աղաջանյանի** «Անորոշ դերբայն ստորոգյալի կազմում» աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Տեր-Մինասյանը և Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Զ. Աղաջանյանը հանգամանորեն ուսումնասիրել ու ներկայացրել է քննվող հարցի վերաբերյալ գրականությունը, համադրել եղած կարծիքները: Գրքում առանձին աղյուսակով ներկայացված է արդի արևելահայերենի բայական եղանակավորողների գործառական հաճախականությունը, դրանք դասակարգված են իմաստային տասներկու խմբերով: Հեղինակը առանձին վերնագրերով մանրամասնությամբ քննել է եղանակավորող – ԱԴ կառույցները՝ ասվածը հաստատելով գեղարվեստական գրականությունից քաղված բազմաթիվ ու համոզիչ օրինակներով: Այս աշխատանքը կհեշտացնի անորոշ դերբայի հատկապես կիրառական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ հետագա զբաղվողների գործը:

Սույն աշխատանքի խմբագիրն է բ. գ. թ., դոցենտ Լեոնիդ Թելյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ դոցենտ **Զարիկ Աղաջանյանի** «Անորոշ դերբայն ստորոգյալի կազմում» աշխատանքը երաշխավորել տպագրության:

Լ Ս Ե Ց Ի Ն – Ամբիոնի վարիչ, պրոֆ. **Յուրի Ավետիսյանի** «Ժամանակակից հայերենի կետադրությունը» աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Թ. Տոնոյանը և Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ գիրքը վերաբերում է արդիական և կարևոր մի խնդրի, որը լուրջ և համակողմանի քննության կարիք ունի: Այս հարցի քննությունը գործնական կարևոր նշանակություն ունի գրական լեզվի մշակման ու կանոնարկման տեսանկյունից: Գրավոր խոսքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակնհայտորեն խզում է առաջացել սահմանված կետադրական կանոնների և դրանց գործնական կիրառության միջև: Եվ հարցի քննարկումը արդիական է դառնում այնքանով, որքանով ընդհանուր մոտեցումներ սահմանելու դեպքում հնարավորություն կստեղծվի նախ՝ հրաժարվելու մի շարք անհարկի զուգաձևու-

թյուններից, և հետո՝ հստակեցնելու որոշ կանոններ՝ լեզվակիրառողի համար ավելի դյուրին դարձնելով դրանց յուրացումը և գործածությունը:

Սույն աշխատանքի խմբագիրն է բ. գ. թ., դոցենտ Լեոնիդ Թելյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ պրոֆ. **Յուրի Ավետիսյանի** «Ժամանակակից հայերենի կետադրությունը» աշխատանքը երաշխավորել տպագրության:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության ամբիոնի միջնորդությունը դոցենտ, բ. գ. թ. **Սեյրան Գրիգորյանի** «Պարույր Սևակը և համաշխարհային պոեզիան» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը:

Նշվեց, որ Սեյրան Գրիգորյանը «Պարույր Սևակը և համաշխարհային պոեզիան» մենագրության մեջ հանդես է եկել Պ. Սևակի ստեղծագործությանը ու նրան առնչվող խնդիրների ինքնատիպ զննումներով, Սևակի և համաշխարհային պոեզիայի նշանավոր դեմքերի ստեղծագործությունների առնչությունների ուսումնասիրությամբ:

Ս. Գրիգորյանի այս մենագրությունը՝ բանասիրական ու գրականագիտական, տեքստային զուգադիր քննությամբ, մանրակրկիտ փաստարկումներով ու համոզիչ ընդհանրացումներով, լուրջ ուսումնասիրություն է, սևակագիտության մեջ կարևոր ներդրում: Ժողովածուն կարող է մեծապես օգտակար լինել հայ գրականությունը ուսումնասիրող ուսանողներին՝ արդի գրականության դասընթացների յուրացման գործում, ինչպես նաև հայ գրականությամբ բոլոր հետաքրքրվողներին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Սեյրան Գրիգորյանի «Պարույր Սևակը և համաշխարհային պոեզիան» մենագրությունը երաշխավորել տպագրության:

Վերջում պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց գիտական խորհրդին մասնակցող բոլոր անդամներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ **ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**